Թաւրէզ և գրաւեց Ջահանշահի և նորա տիկնոջ սիրտը, որոնք շատ սիրով ընդունեցին նորան և պարգև տուին «զԱՆՁ Լուսաւորչին ... և զպատիւ պատրիարքութեան։» Ի՞նչպէս ընկաւ Ս. Աջը Թաւրէզ Ջահանշահի մօտ, որ նա կարողացաւ պարգևել Զաքարիային, յայտնի չէ, չենք կարող մտածել, թէ այդ պարգևելը նշանակումէ Ս. Աջի իրաւունքը տալ, որովհետև մի այլ յիշատակարանում նշանակուած է, թէ Զաքարիան եկաւ Ս. Էջմիածին, իրեն հետ բերելով Ս. Աջը։ Նա երկար ժամանակ չմնաց Մայր Աթոռում, այլ Թշնամիների նենգութիւնից զերծ մնալու համար 1461 թուին Ս. Աջն առաւ և գնաց Աղթամար։ Այն ժամանակները մեր երկրի մէջ քրիստոնեաներն այնքան ճնշուած էին և այնպիսի հալածանքի և երկիւղի մէջ էին շարունակ, որ նոցա աչքին ամէն տեղ, կարծես, աստուածային այցելութիւն և մի առանձին բախտ էր երևում Զաքարիայի արձակ համարձակ շրջելը եկեղեցական հանդէսներով։ Երբ Վանայ ժողովուրդը լսեց թէ կաթուղիկոսն իւր հետ բերել է Ս. Աջը, բազմութեամբ դիմեցին ուխտ անելու և համբուրելու։

Բայազիդից սկսած մինչև Վան և մինչև Աղթամար Ս. Աջը տանելու ժամանակ կաթուղիկոսը թափօր էր կազմում, որի առջևից գնում էր «խաչալամը» (խաչադրօշ). սա մի խաչվառ էր մէկ երեսը տէրունական, միւս երեսը Ս. Լուսաւորչի, Տըր-